ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 160/63 «31» 08 2021թ.

2021/2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

1. Հաստատել 2021/2022 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը: Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտել որպես կատարողական կարգապահության խախտում և դարձնել հատուկ քննարկման առարկա ռեկտորատի նիստերում:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Վ. Ասրիյանի, ճշգրիտ և բնագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռ. Հ. Բարխուդարյանի և ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյանի վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտորի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Հ. Վ. Հովհաննիսյան

1. 2021/2022 ուստարվա առաջին կիսամյակի ժամանակացույց

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման բոլոր կուրսերի 2021/2022 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքները սկսել սեպտեմբերի 1-ից և ավարտել դեկտեմբերի 29-ին:

2. 2021/2022 ուստարվա առաջին կիսամյակի ստուգարքների ընդունումը կազմակերպել դեկտեմբերի 22-ից 30-ը:

3. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման բոլոր կուրսերի՝ 2021/2022 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանն անցկացնել հունվարի 10-ից 29-ը:

4. Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել հունվարի 10-ից փետրվարի 5-ը:

5. Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում ընթացիկ): Ամսական վճարման պարագայում 1-ին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցել 2 ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:

6. Առկա ուսուցման պարտքերի մարում սահմանել.

ա/ առաջին լուծարքային շրջան՝ փետրվարի 4-ից փետրվարի 12-ը,

բ/ երկրորդ լուծարքային շրջան՝ փետրվարի 18-ից փետրվարի 26-ը:

7. 2021/2022 ուստարվա 2-րդ կիսամյակի առկա ուսուցման ուսումնական պարապմունքները սկսել փետրվարի 7-ից և ավարտել հունիսի 4-ին:

8. Հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի ուսումնական պարապմունքները սկսել նոյեմբերի 1-ից և ավարտել հունվարի 22-ին: Հեռակա ուսուցման ստուգարքների ընդունումը կազմակերպել հունվարի 17-ից հունվարի 22-ը: Հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանը անցկացնել հունվարի 31-ից մինչև փետրվարի 26-ը:

Հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի ուսումնական պարապմունքները սկսել մարտի 7-ից և ավարտել մայիսի 27-ին:

9. Հեռակա ուսուցման պարտքերի մարում սահմանել.

ա/ առաջին լուծարքային շրջան՝ մարտի 7-ից մարտի 14-ը,

բ/ երկրորդ լուծարքային շրջան՝ մարտի 22-ից մարտի 29-ը:

10. Ուսումնական պլանով նախատեսված բոլոր տեսակի պրակտիկաները սկսելուց 12 աշխատանքային օր առաջ պրակտիկայի բաժին ներկայացնել պրակտիկայի անցկացման

հրամանների նախագծերը, իսկ մասնագիտական պրակտիկայի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պրակտիկայի բաժին ներկայացնել հաշվետվություն ըստ հաստատված ձևաչափի (տրվում է պրակտիկայի բաժնի կողմից):

11. Ժամավճարային հիմունքներով կատարված աշխատանքների հաշվարկի տեղեկագրերը (աշխատանքների հանձնման ակտ) բակալավրիատի բաժին ներկայացնել յուրաքանչյուր ամսվա վերջում:

2. Ֆակուլտետների/կենտրոնների/ինստիտուտի կողմից ուսումնամեթոդական վարչություն փաստաթղթերի ներկայացման ժամանակացույց

Սեպտեմբեր

- Մինչև սեպտեմբերի 6-ը կազմակերպչական բաժին ներկայացնել 28-ից բարձր անապահովության միավոր ունեցող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների տվյալները (տեղեկանք սոց. ապահովության ծառայությունից և ակադեմիական տեղեկագիր):
- Մինչև սեպտեմբերի 10-ը կազմակերպչական բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների փոխատեղման արդյունքները:
- Մինչև սեպտեմբերի 10-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել 1-ին կիսամյակում դասավանդվող դասընթացների պլանները, իսկ մինչ այդ դրանք տեղադրել Մուդլ համակարգի համապատասխան դասընթացի էջում:
- Մինչև սեպտեմբերի 10-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի 1-ին լուծարքի արդյունքները:
- Մինչև սեպտեմբերի 10-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները սահմանված ձևով:
- Մինչև սեպտեմբերի 14-ը պրակտիկայի բաժին ներկայացնել ամռանը անցկացված ուսումնական պրակտիկաների հաշվետվությունները:
- Մինչև սեպտեմբերի 15-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ՄՄՊՈՒՀ-ի շրջանավարտների առարկայական տարբերությունները հանձնելու ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

- Մինչև սեպտեմբերի 20-ը կազմակերպչական բաժին ներկայացնել տեսողական, լսողական և հենաշարժողական խանգարումներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հաշմանդամ ուսանողների ցանկը և այդ ուսանողների դասապատրաստմանն օժանդակելու նպատակով ընտրված դասախոսների կամ ուսանողների անունները:

- Մինչև սեպտեմբերի 22-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցման 2-րդ կուրսի ուսանողների հետ կնքված լրացուցիչ մանկավարժի որակավորման համար պայմանագրերը՝ 2 օրինակից՝ դեկանի մակագրությամբ:

- Մինչև սեպտեմբերի 22-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների հետ կնքված պայմանագրերը՝ 2 օրինակից՝ դեկանի մակագրությամբ:

- Մինչև սեպտեմբերի 22-ը կազմակերպչական բաժին ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների գործերը:

- Մինչև սեպտեմբերի 27-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքի արդյունքները:

Հոկտեմբեր

- Մինչև հոկտեմբերի 1-ը բակալավրիատի բաժին ներկայացնել ընթացիկ քննությունների ժամանակացույցը:

- Մինչև հոկտեմբերի 1-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուս. վարձի զեղչման դիմումները ցուցակով՝ կցելով անհրաժեշտ հիմքերը: Ուսանողներից դիմումների ընդունումը կազմակերպվում է դեկանատներում սեպտեմբերի 9-ից:

- Մինչև հոկտեմբերի 12-ը մուտքագրել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի դասատախտակը:

Նոյեմբեր

- Նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 7-ը ընդհանուր բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման ուսանողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման դիմումները ցուցակով (ֆակուլտետի/կենտրոնի/ ինստիտուտի դեկանի/ տնօրենի մակագրությամբ և վճարման անդորրագրով):

- Նոյեմբերի 8-ից մինչև նոյեմբերի 14-ը Supervision ծրագրում ամրագրել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

- Մինչև նոյեմբերի 9-ը կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողների հետ կնքված լրացուցիչ մանկավարժի որակավորման համար պայմանագրերը՝ 2 օրինակից՝ դեկանի մակագրությամբ:

- Մինչև նոյեմբերի 12-ը կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուս. վարձի զեղչման դիմումները ցուցակով՝ կցելով անհրաժեշտ հիմքերը: Ուսանողներից դիմումների ընդունումը կազմակերպվում է դեկանատներում նոյեմբերի 1-ից:

- Մինչև նոյեմբերի 15-ը բակալավրիատի բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցը:

- Մինչև նոյեմբերի 23-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների հետ կնքված պայմանագրերը՝ 2 օրինակից՝ դեկանի մակագրությամբ:

- Մինչև նոյեմբերի 30-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները սահմանված ձևով:

Դեկտեմբեր

- Մինչև դեկտեմբերի 1-ը կազմակերպչական բաժին (դիպլոմների սենյակ) ներկայացնել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածուների ցուցակը:

- Մինչև դեկտեմբերի 3-ը բակալավրիատի բաժին ներկայացնել առկա ուսուցման քննաշրջանի ժամանակացույցը:

- Մինչև դեկտեմբերի 14-ը կազմակերպչական բաժին (դիպլոմների սենյակ) ներկայացնել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հրամանները:

- Մինչև դեկտեմբերի 14-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել ֆակուլտետի/ կենտրոնի/ ինստիտուտի խորհրդում հաստատված առկա ուսուցման մագիստրոսական թեզերի ղեկավարներին և թեմաների անվանումները:

- Մինչև դեկտեմբերի 14-ը կազմակերպչական (դիպլոմների սենյակ) և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակացույցը:

- Մինչև դեկտեմբերի 23-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել առկա ուսուցման 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ատեստավորում չանցած ուսանողների ցուցակը:

Հունվար

- Մինչև հունվարի 10-ը բակալավրիատի բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

- Մինչև հունվարի 14-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել առկա (1.5 տարի ուսուցմամբ) և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի թեզերի ատեստավորման արդյունքները:

- Մինչև հունվարի 17-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հաշվետվություն՝ կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման վերաբերյալ (կարգի դրույթներին համապատասխան):

- Մինչև հունվարի 20-ը մուտքագրել 2021/2022 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման դասատախտակները:

- Մինչև հունվարի 31-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել կարգով նախատեսված տվյալներ առկա ուսուցման ուսանողների շրջանում 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

Փետրվար

- Մինչև փետրվարի 2-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել քննաշրջանի արդյունքները, իսկ հաշվետվության 34 ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

- Մինչև փետրվարի 10-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (ձև 10):

Ռեկտորի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Հ. Հովհաննիսյան